

ԱՈՒՊ

(ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ)

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՈւՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Արդյունավետ Անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) մշակումը Ձեր սովորողների համար ավելի որակյալ դասավանդում, ուսումնառություն և արդյունք ապահովելու ամենակարևոր գործոններից մեկն է: **ԱՈՒՊ-ի միջոցով սովորողին կրթելու գործում Ձեր դերի հասկացումը օգուտ կբերի և՛ Ձեզ, և՛ սովորողին:**

Ստորև կգտնեք խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ հաջողությամբ կողմնորոշվել ԱՈՒՊ-ի կարիք ունեցող սովորողների կրթության գործընթացում, այդ թվում՝ կստանաք հիմնական տեղեկատվություն ԱՈՒՊ-ի թիմի անդամների մասին, կիմանաք, թե ինչ պետք է անել ԱՈՒՊ-ի մշակման և գնահատման հանդիպումներից առաջ, դրանց ընթացքում և հետո, սովորողի ծառայությունները առավելագույնի հասցնելու համար:



1 ԱՈՒՊ

ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության հիմքն է:

Ուսուցիչներից շատերը ծանրաբեռնվածության և անհանգստության զգացողություն են ունենում ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացների ժամանակ: Այնուամենայնիվ, **ուսուցիչները ԱՈՒՊ-ի մշակման թիմի հիմնական մասն են կազմում:** Դուք՝ որպես ուսուցիչ, ոչ միայն օգնում եք դասարանում սովորողի առաջընթացի գրանցմանը և նպաստում ուսուցման գործընթացում նրա մասնակցության բարելավմանը, այլև արժեքավոր ներդրում եք ունենում այն պլանի մշակման ժամանակ, որը կօգնի Ձեզ և սովորողին հաջողության հասնել հանրակրթության ծրագրերում:

2 Ո՛ՒՄ ՀԱՄԱՐ Է ՄՇԱԿՎՈՒՄ ԱՈՒՊ

ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով գնահատվել ու ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Նրանք չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի պատճառները հետևյալ խանգարումներն են.

- Ձայնի և խոսքի,
- Տեսողության,
- Լսողության,
- Ինտելեկտուալ (մտավոր),
- Շարժողական:

3 ԻՆՉՊԵՄ ԵՆ ՄԱՏՈՒՑՎՈՒՄ ԱՈՒՊ-ՈՒՄ ՆԱԽԱՆՇՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՈՒՊ-ում նախանշված կրթական ծառայությունները մատուցվում են սովորական դասարաններում՝ դասերի ժամանակ ուսուցիչների կողմից, իսկ մասնագիտական ծառայությունները՝ ռեսուրս սեյնյակներում մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կողմից: Այլ դեպքերում ԱՈՒՊ-ով նախատեսված մասնագիտական ծառայությունները ծնողի համաձայնությամբ կարող են մատուցվել նաև տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում՝ կախված սովորողների կարիքներից կամ դպրոցի ռեսուրսներից: Որոշ սովորողներ կարող են ունենալ ԱՈՒՊ միայն մեկ առարկայի համար, իսկ մյուսները, բացի մասնագիտական ծառայություններից, կարող են ունենալ ԱՈՒՊ ակադեմիական բոլոր առարկաների համար: Կարող են լինել նաև սովորողներ, որոնց համար ԱՈՒՊ-ում որևէ առարկայական ծրագիր չի հարմարեցվի (ֆիզիկական դժվարություններ կամ միջավայրային հարմարեցումների կարիք ունեցող սովորողներ), քանի որ սովորողը հաջողությամբ յուրացնում է իր դասարանի բոլոր առարկայական ծրագրերը՝ առանց որևէ ծրագրային, բովանդակային հարմարեցումների, սակայն այս սովորողների ԱՈՒՊ-ներում կպլանավորվեն և կնախանշվեն անհրաժեշտ միջավայրային հարմարեցումները:

4 ԱՈՒՊ-Ի ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Սովորողի ԱՈՒՊ-ի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Սովորողի տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

5 ԱՌՈՒՊ-Ի ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Առաջին խորհուրդն է՝ հասկանալ, թե ովքեր են ընդգրկված սովորողի ԱՌՈՒՊ-ի մշակման թիմում, և որն է նրանց դերը: Բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց գործունեության ընթացքում առընչվում են երեխայի հետ պետք է մասնակցեն երեխայի ԱՌՈՒՊ գրելուն:

- **ԱՌՈՒՊ-ի թիմի անդամներն են.**
 - դասավանդող ուսուցիչները,
 - մանկավարժահոգեբանական աջակցության թիմը (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ և այլն),
 - ուսուցչի օգնականը,
 - սովորողը (հնարավորության դեպքում),
 - սովորողի ծնողը,
 - դպրոցի տնօրենը,
 - դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

Այս մարդիկ պետք է միասին աշխատեն որպես թիմ մշակելու համար սովորողի ԱՌՈՒՊ-ը: ԱՌՈՒՊ-ը մշակելու համար թիմի հանդիպումը պետք է անցկացվի երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացությունը ստանալուց հետո՝ 15 օրացուցային օրվա ընթացքում:

Թիմի յուրաքանչյուր անդամ կարևոր տեղեկատվություն է բերում ԱՌՈՒՊ-ի հանդիպմանը: Անդամները կիսվում են իրենց տեղեկատվությամբ և միասին աշխատում են երեխայի Անհատական ուսուցման պլանը մշակելու համար: ԱՌՈՒՊ-ի մշակման գործընթացում խիստ կարևոր է ծնողի մասնակցությունն ապահովումը և նրանից երեխայի մասին արժեքավոր տեղեկատվություն ստացումը: **Յուրաքանչյուր մասնակցի տրամադրած տեղեկատվությունը ավելացնում է թիմի ըմբռնումը սովորողի ուժեղ կողմերի, դժվարությունների, հետաքրքրությունների և հնարավորությունների վերաբերյալ, քննարկվում է նաև, թե ինչ հարմարեցումներ և ծառայություններ են անհրաժեշտ լինելու նրան:**

- սովորողի գիտելիքների ստուգման, կարողությունների ու հմտությունների ձևավորման, հետաքրքրությունների, ուսումնառության ձևերի:

Դուք՝ որպես սովորողի ուսուցիչ, կարող եք օգնել նաև ԱՌՈՒՊ-ի թիմի հետ քննարկել այն աջակցությունը, որն անհրաժեշտ է թիմի մյուս անդամներին, որպեսզի սովորողը կարողանա.

- հաջողությամբ առաջ գնալ դեպի իր տարեկան կամ երկարաժամկետ նպատակները,
- ներգրավվել և առաջընթաց ունենալ հանրակրթական ուսումնական ծրագրում,
- մասնակցել արտադպրոցական և այլ միջոցառումներին և կրթության ստանալ այլ երեխաների հետ միասին:

ԱՌՈՒՊ-ի մշակման գործընթացը պետք է լինի համագործակցային: Խոսեք, հայտնեք Ձեր կարծիքը և աշխատեք միասին: Ձեր ներդրումն անգնահատելի կլինի:

7 ԱՌՈՒՊ-Ի ՄՇԱԿՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Ինչպես գիտեք, մի փոքր նախապատրաստությունը ունի շատ կարևոր նշանակություն: Ահա մի քանի խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ արդյունավետ նախապատրաստվել Ձեր սովորողի ԱՌՈՒՊ-ի մշակմանը:

- **Վերանայեք նախորդ ԱՌՈՒՊ-ը** - Ուշադիր ուսումնասիրեք Ձեր սովորողի նախորդ ԱՌՈՒՊ-ը (եթե առկա է): Գրառումներ կատարեք՝ ընդգծելով կարևոր կետերը:
- **Նպատակները** - Գնահատեք՝ հասել է արդյոք երեխան այդ նպատակներին: Ծանոթացեք տվյալ տարվա ավարտի դրությամբ սովորողի առաջադիմությանը:
- **Հարմարեցումները** - Վերանայեք հարմարեցումների ցուցակը որոշելու համար, թե արդյոք որևէ բան պետք է ավելացնել կամ հանել: Անհրաժեշտության դեպքում կարելի է վերաշարադրել, որպեսզի թիմի մյուս անդամների համար այն դյուրին լինի:

6 ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԱՌՈՒՊ-Ի ԹԻՄԻ ԱՆԴԱՄ

Հիշե՛ք, **Դուք, որպես ուսուցիչ, ԱՌՈՒՊ-ի մշակման թիմի կարևոր և պարտադիր անդամն եք:** Դուք շատ բան ունեք կիսելու թիմի հետ: Օրինակ՝ Դուք կարող եք խոսել հետևյալի մասին.

- հանրակրթական առարկայական չափորոշիչների ու ծրագրերի, որոնց հիման վրա մշակվում է սովորողի ԱՌՈՒՊ-ը,
- կրթությանն աջակցող սարքերի ու տեխնոլոգիաների կամ ծրագրային փոփոխությունների, որոնք կօգնեն երեխային սովորել և զարգանալ,
- ռազմավարությունների, որոնք կօգնեն կարգավորել երեխային վարքը, եթե նրա վարքագծում առկա են խնդիրներ,

8 ՀՈՒՇՈՒՄՆԵՐ ԱՌՈՒՊ-Ի ԹԻՄԻ ՀԱՄԱՐ

ԱՌՈՒՊ-ը ճկուն փաստաթուղթ է, որը հենվում է սովորողի կարիքների վրա, այլ ոչ թե պիտոորոշման կամ դժվարությունների: Սա նշանակում է՝

- ԱՌՈՒՊ-ը միշտ կարող է փոփոխվել: **Միշտ հնարավոր է վերանայել ԱՌՈՒՊ-ը** և իրականացնել համապատասխան փոփոխություններ ուսումնական տարվա ցանկացած ժամանակահատվածում:
- Կարևոր է ԱՌՈՒՊ-ի ընթացիկ գնահատումների ընթացքում պարբերաբար պատասխանել այս հարցին. **«Իրատեսակա՞ն են արդյոք սահմանված նպատակներն և արդյոք դպրոցն ավարտելիս սովորողին հնարավոր է հասցնել ԱՌՈՒՊ-ով սահմանված երկարաժամկետ նպատակին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների նվազագույն մակարդակին»:**

9 ԱՌՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ինչպես նշեցինք, Դուք՝ որպես ուսուցիչ, ԱՌՊ-ի համագործակցային թմի անդամ եք: Ձեր ներգրավվածությունը պետք է սկսվի Ձեր սովորողի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացումից և շարունակվի ԱՌՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում:

Հիշե՛ք՝ Ձեր մասնակցությամբ մշակվող ԱՌՊ-ն առավել իրատեսական է, քանի որ այն պլանավորելիս հաշվի են առնվում սովորողի մասին Ձեր տրամադրած շատ կարևոր տեղեկությունները նրա դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ:

- **Համոզվեք, որ նոր նպատակները կոնկրետ և չափելի են:** Համոզվեք, որ Ձեր սովորողի համար սահմանված նոր նպատակները SMART են (կոնկրետ, չափելի, իրագործելի, իրատեսական, ժամանակային առումով պլանավորված):
- **Սովորողի ԱՌՊ-ը քննարկելիս միշտ սկսեք դրական նոտայից:** ԱՌՊ-ի հանդիպումները երբեմն լարված կամ հուզական կարող են ընթանալ, ուստի կարևոր է ընդունել և ընդգծել այն կարողություններն ու հմտությունները, որոնք ունի սովորողը և որոնց վրա միայն հնարավոր կլինի ձևավորել նորերը:
- **Եղեք զգայուն, բայց անկեղծ:** Երբ պահը գա քննարկելու վարքագծային խնդիրները կամ ակադեմիական դժվարությունները, դրանք ներկայացրեք առանց սուբյեկտիվության: «Խնդիրները» ցուցակագրելու փոխարեն խոսեք «բարելավման ոլորտների» կամ «նպատակների» մասին, որոնք հիմնված են տվյալների, դիտարկումների և փաստերի վրա:
- **Եղեք խնդիր լուծող:** Սովորողի ԱՌՊ-ի մշակմանը եկեք պատրաստ՝ առաջարկվող լուծումներով և գաղափարներով: Յուրաքանչյուր թիրախային ոլորտի համար առաջարկեք բարելավման գործողություններ կամ մի շարք հարցեր՝ խրախուսելով արդյունավետ երկխոսությունը:
- **Դարձեք տեղեկատվության սպունգ:** Երբեմն Դուք կարող եք ներգրավվել այն սովորողի ԱՌՊ-ի մշակման մեջ, ում դասավանդելու փորձ համարյա թե չունեք: Եթե իրավիճակն այդպիսին է, ապա հնարավորություն ունեցեք կլանել որքան հնարավոր է շատ տեղեկատվություն: Այս հանդիպումներին ներկա լինելը թույլ կտա պատկերացում կազմել այդ սովորողի հետ ճանապարհորդության ավելի մեծ պատկերի վերաբերյալ, ինչպես նաև նախկինում աշխատած կամ չաշխատող միջամտությունների վերաբերյալ:
- **Ներգրավվեք սովորողին:** Թույլ տալով սովորողներին խոսել այն մասին, թե որոնք են իր նախընտրած կամ ամենաքիչ սիրված առարկաները, որտեղ ենք նրանք զգում, որ

կատարելագործման կարիք ունեն, և այն, ինչ ակնկալում են իրականացնել, կարող է օգնել ԱՌՊ-ի հանդիպումն ավելի կառուցողական դաշտ տեղափոխել: Ի վերջո, խոսքը նրանց մասին է:

10 ԱՌՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԱՌՊ-ի իրականացման ընթացքում երեխայի դասավանդող ուսուցիչը կարևոր դերակատարում ունի դպրոցում գիտելիքների յուրացման, հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում:

- **Համագործակցեք մանկավարժահոգեբանական աջակցող մասնագետների հետ:** Ուսուցիչներին անհրաժեշտ են հմտություններ՝ ԱՌՊ-ում նպատակներ սահմանելու և իրենց դասերի ժամանակ դրանք արդյունավետ իրականացնելու հարցում: Մասնագետները սերտորեն համագործակցում են ուսուցիչների հետ մշակված ԱՌՊ-ը դասարանում գործողությունների վերածելու հարցում:
- **Գնահատեք ԱՌՊ-ը:** Ուսումնական տարվա ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի գնահատում հաճախ է իրականացվում (ընթացիկ, կիսամակային, տարեկան) համոզվելու համար, որ սովորողը հասնում է ԱՌՊ-ում դրված նպատակներին: ԱՌՊ-ում սահմանված նպատակներն ու նպատակադրումները ցանկացած պահի կարող են փոփոխվել՝ ըստ անհրաժեշտության:

11 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԱՌՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը: Այդ աշխատանքը կարևոր է, որ ամեն ինչ սահուն և արդյունավետ ընթանա սովորողի համար ԱՌՊ-ի մշակումից հետո և ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Որպես սովորողի ուսուցիչ՝ Ձեր պարտականությունն է անել այն ամենը, ինչ հնարավոր է, որպեսզի ընտանիքի անդամները ներառվեն ԱՌՊ-ի պլանավորման և իրականացման մեջ:

12 ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով պետք է ասել, որ երեխաների կրթության և զարգացման գործընթացների վերաբերյալ կարևոր տեղեկատվությանը ծանոթանալը կօգնի Ձեզ դառնալ Ձեր սովորողի ԱՌՊ-ի թմի վստահ անդամ:

Մենք նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեր աջակցության և համագործակցային աշխատանքի համար: